

ԳՐԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ ԼԱՏԻՆԱԲԱՆ
ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԸԱԲՈՆՄԱՍԲ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ

XVII դ. կեսերին գրաբարի քերականական իրողությունները դեռ քննվում էին լատինաբան դպրոցի ստեղծած ավանդույթների հիմքի վրա: Այդ շրջանում տիրապետող ուսուցողական փիլիսոփայությունն իր ազդեցություն ունեցնում էր պահպանել նաև լեզուների ուսումնասիրության խնդիրները և, ուղղակի թե անուղղակի, ներազդում քերականների գաղափարաբանական ու մեթոդաբանական սկզբունքների ձևավորման վրա: «Բանականությունը դիտվում էր որպես չափանիշ, — գրում է Գ. Ջահուկյանը, — որով վերադասակարգվում են և՛ մարդկային պատմության ընթացքը, և՛ մարդկային մտքի արտադրանքները, և՛ հասարակական կյանքի այս կամ այն երևույթը: XVII դ. քերականության մեջ ուսուցողական ընթացում է լատինաբանության հետ գերկլնդիսաոն (ընդգծումը՝ Ա. Ա.)»¹:

Հունարենից հետո լատիներենն էր համարվում առավել կանոնարկված, հղկված — մշակված լեզու, հետևաբար քերականությունն էլ դիտվում էր որպես «տիպար»: Այս պայմաններում էլ «ծայր էին առնում լատինաբանությունը և հայերենի քերականության մեջ լատիներենի քերականությունների օրինակով «բարեփոխումներ» մտցնելու, քերականական նոր ըմբռնումներ, նոր անվանումներ ներմուծելու փորձերը»²:

Լատինաբան քերական Կղեմես Գալանոսին³ հաջորդում է Ոսկան Երևանցին (1614 — 1674): Նրա աշխատությունը գրաբարի թվով երկրորդ տպագիր քերականությունն է, որ գրված է հայերեն: Այն բավականին երկար վերնադիր ունի. «Քերականութեան գիրք, համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից, ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի, ըստ քերթութեան արհեստի»: Լույս է տեսել Ամստերդամում. մինչև իսկ նշվում է ամիսը՝ փետրվար, որ հազվադեպ է պատահում: Իր քերականությունը շարադրելիս հեղինակը հետևում է լատինաբան դպրոցի մշակած սկզբունքներին, թեև բերում է որոշակի նորություններ:

Լատինաբան քերական Ֆ. Ռիվոլան ճանաչում էր գոյական անվան երեք քերականական կարգեր՝ սեռը, որ գրաբարը չունի, ինչպես նաև լատիներենի պատճենմամբ հորինված ձևեր թիվ և հոլով: Կ. Գալանոսը ընդունում էր չորս կարգեր. «Պատահիմք անուանն չորք. ձև, սեռ, թիվ, հո-

¹ Գ. Բ. Ջահուկյան. Գրաբարի քերականության պատմություն. Երևան, 1974, էջ 63:

² Նույն տեղում, էջ 64:

³ Ա. Աբաջյան. Գրաբարի հոլովները Ֆ. Ռիվոլայի և Կ. Գալանոսի ըմբռնմամբ. — «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 2004, № 3, էջ 153–162:

լով»⁴, սակայն սրանք, ըստ էության, Ֆ. Ռիվոլայի նշած նույն երեք կարգերն են, քանի որ առաջինը՝ ձևը, քերականական կարգ չէ. վերաբերում է գոյական անվան կազմությանը՝ բառակազմությանը:

Ոսկան Երևանցին առանձնացնում է գոյականի քերականական յոթ կարգ. «Ի քանի՞սն բաժանին անուանք. յեօթն», որոնք են՝ «էութիւն, քանակ, սեռ, թիւ, կարգ, կերպաւորութիւն, հոլով»⁵: Այս յոթ հատկութիւններէից, արդի ըմբռնմամբ բուն քերականական կարգեր են երեքը՝ սեռը, թիվը և հոլովը, որոնք ավելի վաղ ճանաչել էին Ֆ. Ռիվոլան ու Կ. Գալանոսը: Մնացած չորսից երեքը՝ «էութիւնը», «քանակը» և «կարգը», այլ բան չեն, քան անվան իմաստային խմբերը. էութիւն, այսինքն՝ գոյացութիւն, գոյութիւն, լինելութիւն, ինչք և այլն, քանակ, այսինքն՝ քանակութիւն, որքանութիւն, որքան լինելը (բազմութիւն, շատութիւն, նաև՝ սակավութիւն՝ հավաքականութեան իմաստով և այլն), կարգ, այսինքն՝ դաս, խումբ, նաև՝ դասավորութիւն, հաջորդականութիւն, կարգավորութիւն: Որոշ վերապահութեամբ այս վերջինը՝ կարգը, կարելի է համարել ոչ թե բառագիտական, այլ քերականական, ավելի ճիշտ՝ ձևաբանական հասկացութիւն, այդ դեպքում այն կնշանակի կարգային (կատեգորիալ) հակադրութիւն: Այս իմաստով բացառված չէ, որ Երևանցին ճանաչել է ձևաբանական չորս կարգեր: Չորրորդը «կերպավորութեան կարգ» կոչվածն է, գոյական անվան հնչյունային կերպն է, կերպարանքը կամ ժամանակակից տերմինաբանութեամբ՝ ձևակազմութիւնը (գոյականակազմութիւնը): Ինչ վերաբերում է հոլովման կարգին, այստեղ Ֆ. Ռիվոլայի և Կ. Գալանոսի տեսութիւնները դիմաց Երևանցին ունի նորութիւններ:

Ֆ. Ռիվոլան, ինչպես հայտնի է, զբաղարում ճանաչում էր հինգ հոլով, Կ. Գալանոսը՝ տասը հոլով: Ոսկան Երևանցին ո՛չ առաջինն ընդունեց, ո՛չ երկրորդը, այլ սահմանեց ութ հոլով՝ փաստորեն կատարելով առաջին քայլը՝ վերադարձ դեպի դասական-ավանդական քերականութիւն: Նրա ընդունած հոլովներն են՝ 1) ուղղական, 2) սեռական, 3) տրական, 4) հայցական, 5) հոշական, 6) գործիական, 7) կայական, 8) սկզբնական: Այս ութ հոլովները նա բաժանում է երկու խմբի, ինչպես Կ. Գալանոսը: Երկու հեղինակների համակարգերում էլ առաջին խումբը, եթե կարելի է այսպես ասել, միակի է, բովանդակում է միայն մեկ հոլով՝ ուղղականը (Կ. Գալանոսի հարացուցում՝ անվանականը): Ըստ Երևանցու՝ առաջին հոլովը «ուղղականն է, կամ անվանավոր (անվանական – Ա. Ա.), քանի որ չի թեքվում («դի ո՛չ անկանի»), այլ էութեամբ ուղիղ անվանումն է (առարկայի, անձի, իրողութեան և այլնի)»⁶: Մնացածը կազմում է երկրորդ խումբը, որ ներկայացնում է ուղիղ կամ ելակետային ձևից գոյացած թեք ձևերը: «Իսկ մյուսները, ասվում են թեքումներ («անկեք»), քանի որ ուղիղը արտահայտելուց թեքվում են («անկանին յուղիղ նշանակելոյ)»⁷:

⁴ Կ. Գալանոս. Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւնն շահելոյ. Հոռոմ, 1645, էջ 29:

⁵ Ո ս կ ա ն Ե Ր Ե ւ ա ն ց ի. Քերականութեան գիրք. Ամստերդամ, 1666, էջ 6:

⁶ Նույն տեղում, էջ 12:

⁷ Նույն տեղում:

Երևանցին փոխել է հոլովների ոչ միայն թիվը՝ տասը վերածելով ութի, այլև մասամբ նաև անվանումները և դասավորությունը.

Ա. վերականգնել է նախկին ուղղական անվանումը, որ Ֆ. Ռիվոլան և Կ. Գալանոսը կոչել էին անվանական:

Բ. Կոչականը կրկին վերանվանվել է հոչական, որ նախկինում ևս ոմանց կողմից ընդունված անվանում էր:

Գ. Ներգոյականը կոչել է կայական:

Դ. Բացառականը կոչել է սկզբնական:

Ե. Երևանցին հոլովական հարացույցից հանում է Կ. Գալանոսի և ուրիշների կողմից ճանաչված, այսպես կոչված պատմական և պարառական հոլովները (ղբանէ, զրանից, զբանիւ, զբանիւք) որպես ոչ ճիշտ և գրաբարի լեզվամատածողութեան անհարիր ու խորթ ձևեր:

Զ. Հոլովակազմութեան երկետ համարում է ուղղականը՝ մյուսները բիւցնելով ուղղականից: Այսպէս՝ «Ասի սեռական ի (ընդգծումը՝ Ա. Ա.) սերելոյ կամ զի նախկին ծնանի յուղղականէ»⁸:

է. Կայական կոչված (ներգոյական) հոլովը, բացի սովորական կազմութունից, արտահայտում է նաև ըն ներմուծված նախամասնիկով կամ «նախգրով» թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում: Հատկանշական է, որ եթե բառը սկսվում է ձայնավորով, հիշյալ «նախգիրը» հնչյունափոխվում է՝ վերածվելով ն-ի և միանում է հոլովվող բառին: Եթե սկսվում է բաղաձայնով, պահպանում է իր նախնական տեսքը և մնում է մեկուսի կամ անջատ. օրինակ, եզակի՝ ըն բանում, ըն պտղոյ, նԱղամում, նանձին, հոգնակի՝ ըն բանս, ըն պտուղս, նԱղամս և այլն⁹: Ինչպես իրավացիորեն նկատում է Հր. Աճառյանը. «ըն նախգիրը ինքնին բավական չէ կազմելու համար ներգոյական հոլովը, այլ ինչպես լատիներենում, տահանջում է, որ գոյականն էլ տրական կամ ավելի ճիշտ ներգոյական հոլովաձևն ունենա, սրա համար էլ կցվում են եզակիում՝ -ում, -ոյ, -եր, -եղ ձևերը, իսկ հոգնակիում՝ ս»¹⁰:

Ը. Հոչական (կոչական) հոլովը հատուկ է համարել միայն գոյական անվանը և անձնական եզակի երկրորդ գեմքի՝ դու գերանվանը:

Թ. Հոլովական հարացույցը կազմելիս փոփոխություն է մտցրել նախ հաջորդականություն մեջ: Նրա ներկայացրած հոլովական հարացույցն ունի հետևյալ պատկերը.

Եզակի		Հոգնակի
Ուղղական — օր	ես	աւուրք
Անուական — աւուր	իմ	աւուրց
Տրական — աւուր	ինձ	աւուրց
Հայցական — զօր	զիս	զաւուրս
Հոչական — ո՛վ օր	—	ո՛վ աւուրք
Գործիական — աւուրք	ինեւ	աւուրքք
Կայական — նաւուր	յիս	նաւուրս

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 15:

¹⁰ Հր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. մաս Բ, Երևան, 1951, էջ 314:

Սկզբնական – յօրէ

յինէն

յաւուրց

Հ. Մխիթարյանի ճշմարիտ դիտարկմամբ՝ «Ոսկանը կայական և պարա-
ուական անվանումները գործածում է որպես հոմանիշներ և երկուսն էլ
գրեթե հավասարապես ու փոխփոխ»¹¹:

Այս երկու գիտաբառերի տակ Երևանցին հասկանում է ներգոյական
հոլովը (նավուր, նաւուրք, յիս և այլն): «Այսպիսով, եթե հոշականը (կոչա-
կանը) հանենք և զուգահեռ հոլովները միացնենք, ապա Ոսկանի մոտ
փաստորեն մնում են յոթ հոլովները, որոնք հետագա քերականները ըն-
դունեցին որպես հիմք և անփոփոխ ձևով դրեցին իրենց քերականություն-
ներում մինչև Մ. Աբեղյանը»¹²:

Պետք է ասել նաև, որ Ոսկան Երևանցին միշտ չէ, որ հետևողական է իր
սկզբունքների մեջ: Միևնույն հոլովը տարբեր անուններով կոչելը կարող
էր տարբերանունների տեղիք տալ տվյալ ժամանակի հենքի վրա, եթե մա-
նավանդ նկատի ունենանք վանական կամ հոգևոր դպրոցներում շրջա-
նավոր տարբեր հեղինակների տարաբնույթ քերականությունների առ-
կայությունը: Մյուս կողմից շեշտը գնելով հոլովական ձևի կամ ձևակազ-
մության վրա՝ Երևանցին խիստ մակերեսորեն, ասես հարևանցիորեն է
անդրադարձել հոլովական իմաստի կամ հոլովի իմաստային կառուցվածքի
հարցերին: Ահա մի քանի հոլովների իմաստների բնութագրումներ. «Ասի
սեռական ի սերելոյ /.../: Ասի տրական յընծայելոյ, քանզի ում որ ինչ
տուի, դնի նայնպիսում հոլովում»¹³:

Առաջնորդվելով պատմական սկզբունքով՝ դերանունների հոլովական
հարացույցն ընդհանուր առմամբ ճիշտ է կազմել, թեև «բավականաչափ
խոր չթափանցելով դերանվանական հոլովման մեջ՝ հաճախ տալիս է
միասնական ձևեր այն դեպքերի համար, երբ իրականում կան տարբեր
ձևեր. սեռ. – իմոյ, տր. – իմոյ (փխն. իմում), սեռ. ումեմն (փխն. ուրումն),
տր. ումեմն, սեռ. ումեք (փխն. ուրուք)» և այլն¹⁴:

Հիմք ընդունելով միայն սեռականի, այլ ոչ թե նաև մյուս (մասնավո-
րապես՝ նաև գործիական) հոլովների կազմությունը՝ Երևանցին տարբե-
րակում է տասը հոլովումներ՝ «խոնարհմունք անուանց»: Այս դասակարգ-
մամբ անկանոն և խառը հոլովումները, բնականաբար, դուրս էին մնալու
և՛ դուրս են մնացել նրա տեսադաշտից: Երևանցու առանձնացրած հոլո-
վումներն են՝ 1. -այ - Աղամ - Աղամայ, 2. -ի - ամբիծ - ամբծի, 3. -ոյ և
-ւոյ - մարդ - մարգոյ, հոգի - հոգւոյ, 4. -ան, -ին, եան - արեգակն - արե-
գական, անձն - անձին, արդիւն - արդեան, 5. -եր - ալեր - ալեր, 6. ու -
ծով - ծովու, 7. -եղ - աստղ - աստեղ, 8. օր - հայր - հօր, 9. -ո՛ - կին -
կնոջ, 10. -ուր - օր - աւուր:

Նկատելի է, որ հեղինակը բուն վերջավորությունները ձայնդարձից
(հերթագայությունից) տակավին չի տարբերակում և բոլոր հոլովումները

¹¹ Հ. Մխիթարյան. Ակնարկներ հայերենի շարահյուսության պատմության.
Երևան, 1990, էջ 160:

¹² Նույն տեղում:

¹³ Ո ս կ ա ն Երեւանցի. նշվ. աշխ., էջ 11:

¹⁴ Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 73:

ներկայացնում է վերջավորության տեսքով: Այսպիսի ըմբռնումը հատուկ էր ընդհանրապես թե՛ հունաբան, թե՛ լատինարան դպրոցների ներկայացուցիչներին:

Այսպիսով, Ոսկան Երեանցին գրաբարի քերականական իրողությունները, այդ թվում հոլովներին ու հոլովումներին վերաբերող հարցերը քննելիս Ֆ. Ռիվոլայի ու Կ. Գալանոսի համեմատությամբ թեև պակաս չափով, բայց և այնպես աչքի առաջ է ունեցել ոչ այնքան բուն գրաբարի համակարգային օրինաչափությունները, որքան լատիներենին հատուկ որոշակի ձևեր, որոնք շատ անգամ փորձել է մոծել Հայերենի մեջ:

Լատինաբան դպրոցի հետևորդներից է Սիմեոն Ջուղայեցին, որն առավել հայտնի է իր «Գիրք որ կոչի քերականութիւն արարեալ և շարագրեալ ի Սիմէօնէ վարդապետէ Ջուղայեցոյ» աշխատությամբ¹⁵: Ջուղայեցին ընդունում է տասը հոլով՝ Կ. Գալանոսի պես¹⁶, դրանք են՝ ուղղական, սեռական, տրական, գործիական, հայցական, սկզբնական (բացառական), պատմական, ներգոյական, արտագոյական (պարառական) և կոչական: Ջուղայեցու հիմնական վաստակը ոչ այնքան հոլովների տարբերակման մեջ է, որքան գրաբարի հոլովման առավել հստակ սկզբունքների մշակման բնագավառում: Ըստ այդմ՝ նա առանձնացնում է՝ 1) անկանոն հոլովումները, որոնք են «միավանկ կամ յատուկ եղանակք հոլովման», 2) «բազմաթիվ անունների պատկանող» կանոնավոր հոլովումներ: Նշենք, որ «անկանոն» և «կանոնավոր» անվանումները պայմանական են, քանի որ նա հոլովների «տարբերակիչ հատկանիշ է համարում ոչ թե ձևերի կանոնավորությունը, այլ ծավալը...»¹⁷: Ի դեպ, առաջին անգամ նա է շրջանառության մեջ դրել նախդրավոր տրական անվանումը: Ջուղայեցին չի բավարարվել հոլովներին և դրանց արտահայտման ձևերի քննությամբ: Նրա ուշադրության կենտրոնում են եղել նաև հոլովների հետ կապված շարահյուսական հարցերը: Այս և այլ հարակից խնդիրների ուսումնասիրության բնագավառում Ջուղայեցին փորձում է ձեռքադաստիակ լատինաբան դպրոցի ճնշող ազդեցությունից և հայերենի քերականական կառուցվածքի շատ իրողություններ քննել ոչ թե նախասահմանված կաղապարներով, այլ իրական լեզվական փաստերից ելնելով:

Հովհաննես Հակոբ Կոստանգնուպոլսեցին (1635-1691) լատինաբան դպրոցի առավել հայտնի ներկայացուցիչներից է, որը հայ մատենագրութայան մեջ ավելի ճանաչված է Հոլով մականվամբ՝ Հովհաննես Հոլով: Նա XVII դ. կեսերի հայ ամենազարգացած մտավորականներից մեկն է եղել, նվիրյալ կաթողիկ, ունեցել է խիստ բեղմնավոր գրիչ, հեղինակ է մի շարք կրոնական, իմաստասիրական, քերականական աշխատությունների: Կատարել է նաև բազմաթիվ թարգմանություններ: Եղել է ժամանակի առաջին գրաքննիչներից մեկը¹⁸, գրել է գրաբարի քերականություն հայերեն և լատիներեն լեզուներով: Հայերեն քերականությունը կոչվում է «Ձառու-

¹⁵ Ս. Ջ ու ղ ա յ ե ց ի. Գիրք որ կոչի քերականութիւն արարեալ և շարագրեալ ի Սիմէօնէ վարդապետէ Ջուղայեցոյ. Կ. Պոլիս, 1725:

¹⁶ Ա. Ա բ ա ղ յ ա ն. նշվ. աշխ. - Բեշ, էջ 155-156:

¹⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 128:

¹⁸ Լ ե ո. Հայոց պատմություն. հ. 3, Երևան, 1946, էջ 469:

թիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական»: Մեկ տարի հետո Ղուլը հրատարակում է նաև լատիներենի քերականութիւն՝ հայերեն: Այնպես որ նա թեև առանձին գրքերով, բայց ըստ էութեան ներկայացնում է հայերենի և լատիներենի քերականութիւնների զուգագիր քննութիւն: Հ. Ղուլը, հայ քերականագիտական մտքի պատմութեան մեջ առաջինը լինելով, տարբերակում է հայերենի երեք որակներ, որոնք են՝ «հայկական» (*haigica*), որի անվան տակ նկատի ունի գրաբարը, «աշխարհական» (*vulgaris*), որի անվան տակ նկատի ունի ժողովրդական բարբառները, և «քաղաքական» (*civilis*), որ ըստ նրա ներկայացնում է երկուսի «խառնուրդը»¹⁹: Նրան ամենից ավելի հետաքրքրել է «հայկական» տարբերակը, այսինքն՝ գրաբարը, որը «զուտ կանոնաւոր» է, «արք հմուտք շաւղաց քերականութեան և համբաւունակք ի մէջ հայկազունեաց»²⁰: Թեև նա այնքան էլ հարգանքով չի խոսում մյուս տարբերակների մասին և դրանցից երկրորդը համարում է «չփոթուն և անկանոն», երրորդը՝ առաջին երկուսի յուրօրինակ խառնուրդ («խառնեցեալ ի երկոցունցն»)՝²¹, սակայն իրավացիորեն համարվում է մեր մատենագրութեան առաջին հեղինակներից մեկը, որ նշումներ է տալիս վաղ շրջանի «աշխարհական» լեզվի մասին:

Հ. Ղուլին իր հիշյալ աշխատութեամբ, սկզբունքորեն հետեւելով լատինաբան դպրոցի արդեն բավականաչափ տարածված ու ամրագրված ավանդութիւններին, այսուհանգերձ, զգալիորեն ընդարձակում է հայերենի քերականական համակարգի կանոնարկման ուղղութեամբ կատարվող աշխատանքները: Հայերենի և լատիներենի քերականութիւնների զուգահեռ քննութիւններով և ամենակարճ ժամանակաշրջանում ընդամենը երկու տարում, երեք գիրք հրատարակելով՝ հեղինակը, ամենայն հավանակալութեամբ, հետապնդել է երեք կարևոր նպատակ:

Ա. Հայաստանում հնարավորութիւն ստեղծել ծանոթանալու լատիներենին և լատիներենի միջոցով ավելի դյուրութեամբ յուրացնելու սեփական լեզվում լատիներենի նմանողութեամբ կատարվող նորամտծութիւնները: Այդ նպատակի իրագործումը հեշտացնելու համար զուգադրական քերականութեան սկզբունքով իրար զուգահեռ ներկայացրել է գոյական անվան և դերանվան եզակի ու հոգնակի թվերի հոլովների հարացույցները թե՛ հայերեն և թե՛ լատիներեն տարբերակներով (երկրորդ և երրորդ մասերում):

Բ. Հայերենի քերականութիւնը լույս է տեսել Հոռոմում: Այն այսպես թե այնպես պետք է հասցեագրված լիներ նաև տեղացիներին: Եվ բնական է, որ իր նպատակին ավելի արդյունավետ կերպով կձառայեր, եթե օտար մի երկրի, այս դեպքում՝ Հայաստանի բնակիչների (հայերի) լեզվի քերականութիւնը մայրենի լեզվով մատուցվեր, այսինքն՝ լատիներեն: Չմոռանանք, որ կաթոլիկ եկեղեցին մշտական և երբեք չնվազող շահեր է ունեցել Հայաստանում (և ոչ միայն Հայաստանում):

¹⁹ Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 88 – 89:

²⁰ Թ ո վ հ. Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ս ե ց ի. Հոլով. Ձտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական. Հոռոմ, 1674, էջ 3:

²¹ Նույն տեղում:

Գ. Հ. Հոլովն ունեցել է մի կարևոր ձգտում ևս. նա փորձել է, ժամանակակից տերմինաբանությամբ ասած, դյուրացնել տարբեր ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունները, երկու լեզուների յուրովի «զուգադրական» քերականությամբ նպաստել համապատասխան ժողովուրդների և նրանց մշակույթների մերձեցմանը, որ ինքնին վեր է ամեն դրվատանքից:

Ստորև ներկայացնում ենք ժամանակ գոյականի և ես դերանվան եզակի և հոգնակի հոլովները՝ ըստ Հ. Հոլովի²²:

Եզակի		Հոգնակի	
Ան. huk tempus	որ է ժամանակք	tempora	ժամանակ
Սեռ. temporis	որ է ժամանակաց	temporum	ժամանակի
Տր. tempori	որ է ժամանակի և ի ժամանակ	temporibus	ժամանակաց
Հայց. tempus	որ է զժամանակ	tempora	զժամանակս
Կոչ. o' tempus	որ է ո՛վ ժամանակ	o' tempora	օ՛ ժամանակք
Բաց. a tempora	որ է ի ժամանակէ	a temporibus	ի ժամանակաց
Եզակի		Հոգնակի	
Ան. ego	այսինքն՝ ես	nos	մեք
Սեռ. mei	իմ	nostrum, nostri	մեր
Տր. mihi	ինձ	nobis	մեզ
Հայց. me	զիս	nos	զմեզ
Բաց. ame	յինէն	a nobis	ի մեկը ²³

Առաջին դեմքն իբրև կոչական չի կիրառվում, ուստի և, բնականաբար, այդ հոլովն այս հարացույցից բացակայում է: Լատիներենում գոյականը պահում է վեց հոլով, ներառյալ՝ կոչականը: Սրանց դիմաց ներկայացված են դասական շրջանի գրաբարի ավանդական հինգ հոլովները և նորամուտ կոչականը:

Գրքի երկրորդ մասը նվիրված է բուն հայերենի քերականության քննությանը, և հայ ընթերցողը, որ մտադրություն ունի սովորելու դրաբարը, շատ նյութ կարող է քաղել այնտեղից: Գրաբարի հոլովական համակարգի ըմբռնման հարցում Հ. Կոստանդնուպոլսեցին հարազատ է լատինատիպ քերականության սկզբունքներին և ճանաչում է նույն տասը հոլովները, որոնք կան Կ. Գալանոսի, Ս. Զուղայեցու հոլովական հարացույցներում: Կատարում է մեկ-երկու ոչ սկզբունքային փոփոխություններ, որոնք են՝

Ա. Նախորդների հորջորջած առողականը, որ բուն կամ դասական գրաբարյան բացառականն էր (ի բանէ), հենց այդպես էլ կոչում է՝ բացառական, դրանով իսկ այս հոլովն այս իսկ անվանմամբ վերահաստատվում է հայոց հոլովական հարացույցում և պահպանվում է մինչև այսօր:

Բ. Նախորդների ճանաչած կացողական հոլովը, որ ըստ էության ներգոյականի իմաստ ունի (ի բանի, ի բանում, ի բանս) կոչեց հենց ներգոյական: Եթե նա մեկ քայլ ևս կատարեր՝ Ֆ. Ռիվոլայի, Կ. Գալանոսի և մյուսների հորջորջած անվանականը վերանվաներ ուղղական, ապա արդի արևել-

²² Նույն տեղում, էջ 35-36:

²³ Նույն տեղում, էջ 131:

լահայերենի հինգ կամ յոթ հոլովների համակարգերը կատարելապես արտացոլված կլինեին նրա հոլովական հարացույցում՝ անշուշտ, հավելյալ կերպով ունենալով ևս մի քանի (չորս) հոլովներ:

Գ. Մյուս ոչ սկզբունքային փոփոխությունը վերաբերում է հոլովների հերթական կարգին:

Գոյական անվան հոլովական հարացույցը՝ վերադասավորված և փոփոխված անվանումներով, Հ. Հոլովի աշխատության երկրորդ մասում ունի հետևյալ պատկերը:

Եզակի	Հոգնակի
Ան. բան	բանք
Սեռ. բանի	բանից
Տր. բանի, ի բան	բանից, ի բանս
Հայց. զբան	զբանս, ի բանս
Բաց. ի բանէ	ի բանից
Պատմ. զբանէ	ղրանից
Գործ. բանիւ	բանիւք
Պար. զբանիւ	ղրանիւք
Ներդ. ի բանի, ըն բանում	ըն բանս, ընդ բանս
Կոչ. ո՛վ բան	ո՛վ բանք ²⁴ :

Հովհաննես Հոլովի հիմնական ծառայությունը գրաբարի հոլովների ուսումնասիրության բնագավառում թերևս բառերի հոլովական նշանակությունների դասակարգումն է՝ կապված դրանց արտահայտած ոչ միայն քերականական, այլև հոգեբանական, տրամաբանական և իմացաբանական հիմքերի բացահայտման հետ: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ նա չի ասում, թե, դիցուք, անվանական (ուղղական) հոլովն ի՞նչ իմաստ է արտահայտում, այլ ասում է, որ այդ հոլովն անվանողական է կոչվում, որովհետև լսողի (ընթերցողի) մեջ արթնացնում է կամ առաջ է բերում որոշակի զգացողություն, որոշակի մտապատկեր, որոշակի վերաբերություններ, առարկայական հարաբերություններ: Այսպիսի մտասեռումը պահանջում է նաև շարադրանքի որոշակի եղանակ: Այդ եղանակն էլ հատկանշվում է նրանով, որ հեղինակը հոլովների բնութագրերը սկսում է ըստ իր կազմած հարացույցում դրանց գրաված հերթական համարների: Ասվածն ավելի լավ պատկերացնելու համար ստորև բերում ենք բոլոր տասը հոլովներին տրված բնութագրերը (ընդդեմումները հեղինակինն են):

«Առաջինն կոչի անուանական, զի ընդարձակապէս և ուղղապէս զհոլովինս իրաց ըստ անուան նշանակէ, որգոն մարդ, հրեշտակ, երկին, երկիր: Քանզի մինչ լսեմք մարդ, թարց այլոց ուրուք մտածման զկենդանի բանականն է ի միտս բերեմք:

Երկրորդն կոչի սեռական, զի զայնոսիկ որք պատկանին առ իւրաքանչիւր հոլովինս կամ էակս սեռորէն նշանակէ, որգոն մարդոյ, հրեշտակի,

²⁴ Նույն տեղում, էջ 4–5:

երկնի, երկրի: Քանզի մինչ լսեմք մարդոյ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր տէր կամ անօղ, կամ առացօղ այլոց իրաց:

Երրորդն կոչի տրական, զի զենթակայս կամ զառարկայս առից տրողականաց կամ դիմողականաց և կամ ձգողականաց նշանակէ, որգոն ցմարդ, ցհրէշտակ, առ յերկինս, յերկիր, քանզի մինչ լսեմք ցմարդ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ տալոյ, դիմելոյ, ձգտելոյ:

Չորրորդն կոչի հայցական, զի զենթակայս կամ զառարկայս առ իս հայցողականաց և կամ խնդրողականաց և կամ ախորժականաց նշանակէ, որգոն ցմարդ, ցհրէշտակ, ցերկին, ցերկիր, քանզի մինչ լսեմք ցմարդ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ հայցելոյ, ախորժելոյ, խնդրելոյ:

Հինգերորդն կոչի բացառական, զի զենթակայս առից բացբարձականաց կամ ասողականաց և կամ սկզբնականաց նշանակք, որգոն է մարդոյ, է հրէշտակէ, յերկնէ, յերկրէ: Քանզի մինչ լսեմք մարդոյ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ բացբառնալոյ, առնելոյ, սկսելոյ:

Վեցերորդն կոչի պատմական, զի զենթակայս առից վիպողականաց կամ ամբաստանողականաց նշանակէ, որգոն ցմարդոյ, ցհրէշտակէ, ցերկնէ, ցերկրէ, քանզի մինչ լսեմք ցմարդոյ, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ պատմելոյ, ամբաստանելոյ:

Եօթներորդն կոչի գործիական, զի ենթակայս առից արհեստականաց կամ դործնականաց նշանակէ, որգոն մարդով, հրէշտակիւ, երկնիւ, երկրաւ, քանզի մինչ լսեմք մարդով, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակա գործիական:

Ութերորդն կոչի պարառական, զի ենթակայս առից շրջապատողականաց կամ փարողականաց նշանակէ, որգոն ցմարդով, ցհրէշտակիւ, ցերկնիւ, ցերկրաւ, քանզի մինչ լսեմք ցմարդով, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ շրջապատելոյ, փարելոյ:

Իններորդն կոչի ներգոյական, զի ենթակայս առից կամ կրից պարունակեցելոց նշանակէ, որգոն ըն մարդում, ըն հրէշտակում, յերկնի, յերկրի, քանզի մինչ լսեմք ըն մարդում, ոչ իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակա պարունակօղ կամ կրօղ:

Տասներորդն կոչի կոչական, զի զենթակայս առից կրողականաց նշանակէ, որգոն ո՛վ մարդ, ո՛վ հրէշտակ, ո՛վ երկին, ո՛վ երկիր, քանզի մինչ լսեմք ո՛վ մարդ, ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակա կոչման»²⁵:

Նկատելի է հոլովների քերականական նշանակությունների բացահայտման իմացաբանական հիմքը: Հոլովական իմաստները քերականը դիտել է իբրև բառիմաստի հավելում, ըստ որում՝ ոչ թե մեկ, այլ մեկից ավելի իմաստների հավելում: Հաճախ թվարկում է այդ իմաստները և ամփոփում մեկ խմբի մեջ՝ դրանով իսկ ընդհանրացնելով քերականական իմաստը, վերացարկելով այն, դրա մեջ դիտելով ընդհանուրը, ընդհանրաբար («սեռօ-

²⁵ Նույն տեղում, էջ 132–133:

ըէն») արտահայտված նշանակութիւնը: «Երկրորդն (հոլովներից – Ա. Ա.), – ասում է նա, – կոչի սեռական, զի զայնուսիկ որք պատկանին առ իւրաքանչիւր էութիւնս կամ էակս սեռօրեն նշանակէ» (ընդգծումները՝ Ա. Ա.):

Մի քանի իմաստներ է ցուցադրում երրորդ հոլովի՝ տրականի համար, որոնք են՝ մատուցելը («տրողականք» – մատուցման խնդիր), դիմելը («դիմողականք» – հանգման խնդիր), ձգտելը մի բանի («ձգտողականք» – հանգման խնդրի երանգավորումներից մեկը) և այլն:

Հոլովը միանգամայն ինքնատիպ մեկնություն է տալիս բառիմաստին քերականական իմաստի հավելմանը: Բոլոր տասը սահմանումներն ունեն հստակ, կարելի է ասել՝ դասագրքային ձևակերպում, ինչն արդեն իսկ վկայում է գրքի մանկավարժական-ուսուցողական նպատակը: Բոլորն անխտիր բաղկացած են երկուական մասերից: Առաջին մասը պարունակում է հոլովական նշանակության մեկնությունը, երկրորդ մասը, որը տվյալ դեպքում ավելի է հետաքրքրում մեզ, հակադարձամբ ներկայացնում է ժխտում և հաստատում՝ «ոչ թե... այլ» սկզբունքով: Ժխտում է տվյալ հոլովված բառի՝ միայն բառիմաստ պարունակելը: Օրինակ՝ չորրորդ հոլովը հայցականը: «Երբ լսում ենք զմարդ, ընդհանրապես մարդն իբրև մարդ չէ, որ հասկանում ենք (չենք հասկանում)....», «...Այլ իբրև ենթակա հայցելոյ, ախորժելոյ, խնդրելոյ»²⁶: Հենց այս երկրորդ մասի երկրորդ մասն է հավելիմաստը՝ բառիմաստին հավելված քերականական իմաստը՝ «հայցելու, ախորժելու, խնդրելու ենթակա» լինելը: Սա է հայցական հոլովի իմաստը, որ գումարվել է մարդ բառի բնիմաստին՝ զմարդ բառաձևի միջոցով: Այդպիսի բնութագրեր ունեն նաև մյուս ինը հոլովները:

Ընդհանրապես պետք է նշել, որ Հ. Հոլովը բավականաչափ հարազատ է մնացել լատինաբան դպրոցի մշակած սկզբունքներին, թեև շատ հարցերում, մասնավորապես հոլովների իմաստների քննության մեջ հաճախ իբրևն ազատ է զգացել, հանգես է բերել ինքնուրույն մտածողություն, նկատել է իրողություններ, ձևակերպել սահմանումներ, որոնք բացակայում էին նախորդների կամ ժամանակակիցների քերականություններում:

Հ. Հոլովի՝ լատինատիպ քերականությունների հանդեպ ունեցած հարազատությունը որոշ հետազոտողներ դադափարաբանական-աշխարհայացքային, հաճախ նաև քաղաքական երանգ են տվել: Հոլովը ոմանց կողմից արժանացել է նույն կամ նման կարգի որակումներին ու այսպանքներին, ինչ որ Կ. Գալանոսը: Հ. Հոլովին ժամանակին խիստ բացասական բնութագիր է տվել Գ. Զարբհանալյանը՝ նրան համարելով «հայկական բանասիրության դահիճ»²⁷: Հ. Մխիթարյանը կարծում է, որ նա «դավաճանել է մայրենի լեզվի դարավոր սկզբունքներին և փորձել է ոտնահարել մեր քերականության օրենքներն ու օրինաչափությունները, լեզվի համար միս ու արյուն հանդիսացող քերականական կարգերը»²⁸: Չենք կարծում,

²⁶ Նույն տեղում:

²⁷ Գ. Զ ա ռ բ հ ա ն ա լ ե ա ն. Պատմութիւն հայերէն դպրութեան. Վենետիկ, 1878, էջ 51:

²⁸ Հ. Մ խ ի Թ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 194:

թե գիտական հարցադրումները կարելի է լուծել քաղաքական մեղադրանքներով:

Այս և նման դնահատականների համար հիմք է ծառայել Հ. Հոլովի աշխարհայացքային, ավելի ստույգ կրոնական-դավանարանական կողմնորոշումը: Նա կաթոլիկ էր և, ինքնին հասկանալի է, անկախ ամեն ինչից, ծառայելու էր կաթոլիկությանը: Վաղ միջնադարից սկսած մինչև ուշ միջնադար կրոնական գաղափարախոսությունը հզոր ուժ է եղել: Եկեղեցին պետություն էր պետության ներսում: Ավելին, Լեոյի վկայությամբ «Շատ արձանագրությունների մեջ մենք տեսնում ենք, որ առաջ կաթոլիկոսն է հիշատակվում, հետո միայն թագավորը»²⁹: Նույնը վերաբերում էր նաև Հռոմի կաթոլիկական եկեղեցուն: Հովհաննես Հոլովն այդ եկեղեցու սպասավորներից էր, ըստ որում ոչ շարքային, այլ բարձրագույն, և բնական է, որ սլարտավորություններ պետք է ունենար նրա նկատմամբ: Սա անկասկած ճիշտ է: Սակայն ճիշտ է նաև այն, որ իր քերականությունները շարադրելիս նա ազատ է եղել կրոնական պարտադրանքներից: «Քերականության մեկնակետը, – գրում է Գ. Բ. Զահուկյանը, – նրա «ենթական» Հոլովը համարում է մարդկային միտքը [intellectus humanus]»³⁰ (և ոչ թե կրոնական գաղափարախոսությունը – Ա. Ա.): Հ. Հոլովի կարծիքով «Քերականությունը, ենթակա ունենալով մարդկային միտքը, առարկա ունի մարդկային խոսքը, որն ուղղում է ըստ բանականության պահանջների, նպատակ դնում մտքի կրթությունը»³¹: Այս է իսկությունը: Հ. Հոլովի լեզվաբանական հետազոտությունները դնահատելիս, անկասկած, չի կարելի անտեսել նրա աշխարհայացքը, կրոնական հավատամքը, բայց և չի կարելի նրա գիտական, տվյալ դեպքում հայագիտական գործունեությունը դիտարկել զուտ դավանաբանական, հակակաթոլիկական հայեցակետով:

ПАДЕЖИ ГРАБАРА В ВОСПРИЯТИИ
АРМЯНСКИХ ГРАММАТИКОВ-ЛАТИНИСТОВ

АННА АБАДЖЯН

Резюме

В статье проводится анализ системы падежей древнеармянского языка (грабара) на основе взглядов лингвистов латинской школы Воскана Ереванци и Оганеса Константинопольсеци (известен под прозвищем Олов). В середине XVII в. грамматические особенности грабара исследовались в свете традиций латинской грамматической школы. Господствующая в тот период рационалистическая философия оказывала влияние и на вопросы исследования языковых явлений, и на формирование идеологических и методологических принципов.

²⁹ Լ Ե Ռ. Անի. Երևան, 1963, էջ 339:

³⁰ Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 91:

³¹ Նույն տեղում:

пов грамматики. В 1666 г. Воскан Ереванци издал свою грамматику, в которой придерживался принципов, разработанных латинской лингвистической школой. Исходя из классической традиционной грамматики, Ереванци выделял 8 падежей древнеармянского языка. Оганес Константинопольский был видным представителем латинской школы. Его труд — грамматика грабара на армянском и латинском языках — является в сущности первой сопоставительной грамматикой армянского и латинского языков. В отличие от Ереванци он придерживался точки зрения, согласно которой падежная система грабара должна состоять из 10 падежей. Основной заслугой Константинопольского является классификация значений падежей, причем не только в грамматическом плане, но и в психологическом, логическом и гносеологическом.

GRABAR DECLINATION SYSTEM THROUGH LATIN SCHOOL ARMENIAN GRAMMARIANS' INTERPRETATION

ANNA ABAJYAN.

S u m m a r y

On the basis of Latin school traditions grammatical phenomena of Old Armenian (Grabar) were still under discussion in the middle of the 17th century. The dominating rationalist philosophy of the time mentioned had an influence both on the linguistic phenomena and the formation of ideological and methodological grammar school traditions. In 1666 the Armenian grammarian Voskan Yerevantsi published a grammar book. His principles were based on the Latin school traditions. Voskan Yerevantsi established an 8-case declination system, in fact taking the first step back to classical traditional grammar. Hovhannes Costandnupolsetsi (known by nickname Holov), one of the famous Latin school grammarians, wrote Old Armenian (Grabar) grammar both in Armenian and Latin. His work was in fact the first comparative grammar of Armenian and Latin. He assumed a 10-case declination system. The main achievement of his research study was the classification of the declination meaning of the words in Old Armenian due to grammatical, psychological, logical as well as gnosiological bases.